

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՉՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ArmDay.am-ի ՀԵՏ

### **Նոր Հայաստանի հաղթական ձեռքբերումների նավարկությունն սկսված է. Տավուշի մարզպետ Հ. Չոբանյան**

Փետրվարի 6-ին կառավարության որոշմամբ Տավուշի մարզպետի [նշանակվեց](#) Հայկ Չոբանյանը: [ArmDay.am](#)-ը մարզի առաջնահերթ խնդիրների ու առաջիկա քայլերի մասին գրուցել է նորանշանակ մարզպետի հետ:

#### **- Երբևէ մտածե՞լ էիք, մարզպետ լինելու մասին, նման ցանկություն ունեցե՞լ եք:**

-Միշտ համոզված եմ եղել, որ Հայաստանի իրական զարգացում կարող ենք արձանագրել միայն մարզերի զարգացման դեպքում, հաղթանակ՝ երբ մարզերը գերազանցեն մայրաքաղաքին տնտեսական ցուցանիշներով: Մարզպետի դերը շատ կարևոր է այս գործում, քանի որ ես մրցակցային ապակենտրոն զարգացման կողմնակից եմ:

Մարզպետ դառնալու թեման նյութականացավ նախընտրական շրջանում, երբ մարդկանց հետ քննարկում էի հաջողության բանաձևեր, ու ժպիտ էր հայտնվում նրանց դեմքերին:

#### **-Կուսակցական պատկանելություն ունեցե՞լ եք, ունե՞ք:**

-Երբեք կուսակցական չեմ եղել, ընդ որում՝ ոչ թե պատահաբար, այլ սկզբունքորեն: Իմ նախապատվությունը գաղափարն ու սկզբունքն է, որոնք հաճախ խոցելի են դառնում կուսակցական հովանոցի ներքո: Չեմ ասում, թե դա ավելի ճիշտ է, բայց հաստատ ավելի ապահով:

#### **-Առաջնահերթ ի՞նչ խնդիրների լուծման առաջ է կանգնած Տավուշի մարզը:**

-Բոլոր խնդիրներն առաջնահերթ են, որոնց լուծման համար մեծ մտածող, աշխատասեր և ազնիվ մարդկանց բանակ է պետք: Այսօր դա ամենաօրախնդիր մարտահրավերն է:

#### **-Նոր Հայաստանի հետ ի՞նչ հույսեր եք կապում:**

-Հույսը շատ թույլ բառ է՝ իմ սպասումները որակելու համար: Համոզված եմ, որ Նոր Հայաստանի հաղթական ձեռքբերումների նավարկությունն սկսված է, հաջողություններն անշրջելի են լինելու:

#### **-Ինչպիսի՞ն եք տեսնում Տավուշի մարզը մի քանի տարի անց:**

-Կտեսներ՝ մենք դեռ կգերազանցենք մեր երազանքները:

[www.armday.am](http://www.armday.am)